



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿԱԳՐԱԿԱՆ

ԺԱՐԱԹԱԹԵՐԸ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻԻ 42

ԱՊՐԻԼ, 28/11 ՄԱՅԻՍ 1912

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿԱԳՐԱԿԱՆ

ԺԱՐԱԹԱԹԵՐԸ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ



ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Երկրորդ տարի : Ապրիլ 28/11 Մայիս : Թիւ 42

ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԸ

ՃԱՌ Ս. ԳՐԻԳՈՐԻ ՔԱՀԱՆԱՅԱԳԵՏԻ

(Ի Մառկոս, Գլ. ԺԶ. 14—20)

Աշակերտաց Տէրունական յարութեան վրայ ուշ հաւատացած ըստլը՝ ո՛չ այնչափ անոնց տկարութեան որչափ յապագային մեր հաւատոյ հաստատութեան համար էր : Բանգի նոյն յարութիւնը՝ անոնց աստուծոսելուն պատճառաւ, այլեւայլ փաստերով ապացուցուեցաւ իրենց. զորս երբ մենք կը կարդանք, անոնց երկրայութենէն ևս սուսել հաստատութիւն կը գտնենք : Նուազ կ'ազգէ ինծի Մարիամ Մագդաղենացի որ չուտով հաւատաց, քան թովմաս որ ընդ երկար տարակուսեցաւ : Որովհետեւ սա երկրայելովը՝ վերքերուն սպիւնները չօչափեց, ու մեր կուրծքէն երկրայութեան վերքը փարատեց : Բաց աստի տէրունական յարութեան ճշմարտութիւնը ակնարկելու համար պէտք է զիտենք ինչ որ Դուկաս կ'ըսէ. «Եւ երբ անոնց հետ կ'ուսէր, կը պատուիրէր անոնց որ Երուսաղէմէ

չմեկնին» (Դորժ, Ա, 4)։ Եւ քիչ վերջը . «Միեղեղ աւոնոյ կը նային Վի-
րացաւ . եւ ամպը ծածկեց զանկայ աւոնոց այֆերէն» (անդ, 9)։ Ո՛ւշ գրէք
խօսքերուն . թափանցեցէ՛ք խորհուրդներուն : Ուտեղեկ վերջը վերացաւ .
Կերաւ եւ համբարձաւ . որպէս զի կերակուրի արդեամբ մարմնոյն ճշմար-
տութիւնը յայտնուէր : Իսկ Մարկոս կը յիշէ թէ Տէրն մեր երկինք համ-
բառնալէ առաջ , աշակերտները յանդիմանեց՝ իրենց խտասարտութեան ու
անհաւատութեան համար : Յորում պէտք է խորհրդածենք որ՝ Տէրն անոր
համար յանդիմանեց աշակերտները , երբ մարմնով բաժնուեցաւ . անոնցմէ ,
որպէս զի այն խօսքերը զորս մեկնամ պահուն կ'ըսէր , լսողներուն սրտին
մէջ անջինջ դրոշմուած մնային : Անոնց խտասարտութիւնը յանդիմանելէ
յետոյ , լսենք թէ ինչ իրաւոյն կուտայ անոնց . «Գագե՛ք քոյր աշխատի .
ֆարոգեցե՛ք Աւեստաւը ամեն արարածներու» :


Միթէ , եղբարք իմ , սուրբ Աւետարանը պիտի քարոզուէ՞ր նաեւ
անզգայ բաներու կամ անբան անասուններու որ կ'ըսուի Առաքելոց՝
Քարոզեցէ՛ք զայն ամեն արարածներու : Սակայն ամէն արարած անուամ-
բը կ'իմացուի մարդ : Քանզի կան արարածներ , ինչպէս են քարեր , ու-
րոնք ո՛չ կ'ապրին , ո՛չ կ'զգան : Կան ուրիշներ , ինչպէս են խոտեր եւ
բոյսեր , որոնք կ'ապրին , բայց չեն զգար : Կ'ըսէ Պօղոս Առաքեալ . «Ա՛ն-
միտ , իմ սերմանածդ չկենդանանաւ , եթէ չմեռնի» (Ա . Կոր . ԺԵ , 34) :
Կան նաեւ անխօս անասուններ , որոնք կ'ապրին , կը զգան . բայց չու-
նին ճանաչողութիւն եւ դատողութիւն : Իսկ հրեշտակները կ'ապրին , կը
զգան ու կ'իմանան : Իսկ մարդը բոլոր արածներէն բան մ'ունի : Հասա-
րակ է իրեն՝ գոյութիւնը քարերու հետ , կեանքը բոյսերու հետ , զգա-
յութիւնը կենդանիներու հետ , իմացականութիւնը հրեշտակներու հետ :
Ուստի մարդս , որ ամէն արարածոց հետ հասարակաց բան մ'ունի , ըստ
իմիք կրնայ ըսուիլ ամեն արարած : Որով Աւետարանը ամէն արարած-
ներու կը քարոզուի , երբ մարդուս միայն կը քարոզուի : Քանզի նա
կ'ուսուցուի , որու համար երկրիս վրայ ամէն բան ստեղծուած է , եւ որ-
մէ , նմանութեամբ մը , օտար չէ եւ ոչինչ : Ամեն արարած ըսելով կրնայ
նաեւ իմացուիլ հեթանոսաց ամէն ազգերը : Քանզի յառաջ ըսուած էր .
«Հեթանոսաց ճափաւ մի՛ երթա՛ք» (Մատթ . Ժ , 5) Իսկ հիմա կ'ըսուի .
Քարոզեցե՛ք ամեն արարածներու . որպէս զի առաքելոց քարոզութիւնը
այն ատեն միայն մեզի գար սատարելու , երբ Հրէաստան ինչպէս իւր
դատապարտութեան մերժէր զայն ամբարառանութեամբ : Սակայն ճշ-
մարտութիւն իւր տաքեալները քարոզելու զրկելով ուրիշ ի՞նչ բան
կ'ընէ աշխարհիս վրայ , եթէ ոչ սերման հատիկները կը ցանէ : Եւ քիչ նա-
տիկները կը զրկէ սերման , որպէս զի առօտ առատ հունձքերու արմտեայ
արդիւնքները ժողով մեր հաւաաքէն : Որովհետեւ քովանդակ աշխարհիս
մէջ հաւատացեալներու այսչափ շատ հունձքեր չէին բարձրանար , եթէ
քարոզողներու այն ընտրեալ հատիկները Տիրոջ ձեռքէն բանական երկրի

վրայ գալու չըլլային: Ով որ հաւատայ ու մկրտուի. պիտի փրկուի. եւ ով որ չհաւատայ, պիտի դատապարտուի: Հնար է ձեզմէ ամէն մէկը ըսէ ինքն իրեն. Ես արդէն հաւատացի, ուրեմն պիտի փրկուիմ: Ծշմարիտ կ'ըսէ, եթէ իր հաւատքը գործերովը կը պահէ: Քանզի ճշմարիտ է այն հաւատքը, որ խօսքով ըսածին իր բարքով հակասեր: Ասոր համար է որ քանի մը սուտանուն հաւատացելոյ համար կ'ըսէ Պօղոս. «Կը խոստովանիև թէ զիտեն զԱստուած, եւ իրենց գործերովը կ'ուրանան» (Տիմ. 1, 16): Ուստի ըսաւ Յովհաննէս. «Ով որ կ'ըսէ թէ կը ճանցնաւ զԱստուած, եւ անոր պատիրանները չպահե, աշահօս Խ» (Ա. Յովհ. Բ, 4): Աս այսպէս ըլլալով, մեր հաւատքին անկեղծութիւնը, մեր կեանքի վարմունքէն պէտք է ճանչնանք: Քանզի ան ատեն միայն ճշմարտապէս հաւատացեալ ենք, երբ խօսքով խոստացածնիս գործքով ալ կատարենք: Տե՛ս, մկրտութեան օրը խոստացանք հրաժարիլ հին թշնամուսն ամէն գործերէն և աշխարհիս ամէն պատրանքներէն: Հիմա ձեզմէ իւրաքանչիւրը ինքզինքը քննէ. եթէ մկրտութենէն առաջ խոստացածը կը պահէ, հաւատացեալ ըլլալուն վրայ ստոյգ ըլլալով, թո՛ղ ուրախանայ: Բայց ահա խոստումը ի դերեւ. հանեց չպահեց, եթէ չար գործերու և աշխարհիս խաբէական ցանկութիւններուն անձնատուր եղաւ. տեսնենք թէ զիտէ գոնէ լալ ողբալ իր այսչափ մոլորած ըլլալուն վրայ: Որովհետեւ ողորմած դատաւորին քով այնպիսին ալ ստախօս և խաբեքայ պիտի չտեղուի, որ կրկին կը վերադառնայ ճշմարտութեան՝ նաեւ ստելէն վերջը. քանզի ամենակարողն մինչ յօժարակամ կ'ընդունի մեր ապաշխարութիւնը, ինքն իր դատաստանաւ մեր մոլորութիւնը կը ծածկէ:

Իսկ հաւատացեալներուն ետեւէն պիտի ետքան այս նշանները. իմ անուանքս ստանանները պիտի հանեն. չեզուններ պիտի խօսին, ձեռքերուն մէջ օձեր պիտի բռնեն, եւ եթէ քոյն ալ խնկու ըլլան, իրենց չպիտի վնասէ. հիւանդներու վրայ ձեռքերնին պիտի դնեն, ու պիտի բժշկուին: Արդ. եղբարք իմ, այս հրաշքները չընկնուղ համար մի՛թէ հաւատացեալ չէ՞ք: Բայց ասոնք Եկեղեցւոյ սկիզբը հարկաւոր էին: Հաւատքը աճելու համար հարկ եղաւ զայն սնուցանել հրաշքներով. մենք ալ երբ տունկ մը տնկենք, անոր ջուր կուտանք մինչև որ տեսնենք թէ հողին մէջ հաստատուն արմատ ձգած է, այնուհետեւ ոռոգելէ կը դադրինք: Ասոր համար կ'ըսէ Պօղոս. «Լեզուները նշան են՝ ո՛չ հաւատացելոց, այլ անհաւատից» (Ա. Կոր. ԺԴ, 22): Այս նշաններուն և զօրութիւններուն վրայ դեռ աւելի նրբութեամբ մտածելու բաներ կան: Վառն զի Ս. Եկեղեցին ամէն օր հոգեւորապէս կ'ընէ ինչ որ այն ատեն առաքելոյ ձեռքով մարմնաւորապէս կ'ընէր: Զի անոր քահանաները երդմնեցուցութեան շնորհիւ ձեռքերնին հաւատացելոց վրայ դնելով և չար ոգիներուն հրամայելով որ անոնց մէջ չբնակին, ուրիշ ի՞նչ բրած կ'ըլլան եթէ ոչ սաւորանները վաճառել: Եւ ամէն հաւատացեալներ երբ հին կեանքի աշ-

խարհային խօսակցութիւնները թողլով, սուրբ խորհուրդները կը հնչեցնեն, իրենց Արարչին փառաբանութիւնը և զօրութիւնը կը ցածնուեն չափ կը պատմեն, ի՞նչ բրած կ'ըլլան, եթէ ոչ նոր լեզուներ խօսիլ: Իսկ անոնք որ իրենց բարի խրատներով ուրիշներու սրտերէն կը խլեն կը հանեն չարութիւնը, օձեր կը վերցնեն: Եւ երբ մահաթոյն չար յորդորներ կը լսեն, և սակայն չար գործելու չեն հաւանիր, մահաօրթ է ինչ որ կը խմեն, բայց անոնց բնաւ չիջասեր: Անոնք որ ամեն անգամ իրենց ընկերը կը տեսնեն թէ կը տկարանայ բարեգործութեան մէջ, և իրենց ամէն ուժովն անոր օգնութեան կը հասնին, և իրենց բարեգործութեան օրինակաւ տկարներուն վարքը կը զօրացնեն, ի՞նչ ուրիշ բան բրած կ'ըլլան, եթէ ոչ հիւանդներու վրայ ձեռք դնել ու բժշկել: Եւ այս հրաշքներն այնչափ աւելի մեծ են, զի հոգեւորական են. այնչափ աւելի մեծ են, զի անոնցմով ոչ մարմիններ այլ հոգիք կը բուժուին: Ահա այս հրաշքները, ամենասիրելի եղբայրք, Աստուծոյ օգնութեամբ, եթէ ուղիւ ըլլաք, դուք կ'ընէք: Քանզի այն արտաքին նշաններով կարելի չէ կեանք ստանալ: Որովհետեւ այն մարմնաւոր հրաշքները կը նշանակեն երբեմն սրտութիւնը, բայց զայն չեն տար. իսկ այս հոգեւոր բաները, որոնք կը գործուին մտքի մէջ, կեանքի ոյժը չեն ցուցներ, սայց կու տան: Այն մարմնաւոր հրաշքի զօրութիւնը կրնան երբեմն չարերն ալ ունենալ. իսկ այս հոգեւորականները միայն բարիները կը վայելեն: Անոր համար էր որ ճշմարտութիւնն ըսաւ ոմանց համար. «Շատերն այն օրը պիտի ըսեն ինծի. Տէ՛ր Տէ՛ր, մի՛թե քու անուամբ մարգարէութիւն չորի՞նք, եւ քու անուամբ դուք չհանգի՞նք, եւ քու անուամբ շատ մը հրաշքներ չգործեցի՞նք. եւ ան ասէն պիտի ըսէ անոնց, թէ՛ բնաւ չեմ ճանցնար, զձեզ. մեկդի զացե՛ք ինծմէն անեմի՛ք որ անօրէնութիւն կը գործե՛իք. «(Մատթ. է, 22, 23): Մի՛ ուրեմն, ամենասիրելի եղբայրք, մի՛ սիրէք այն նշաններն զորոնք հաւատարմացն կրնան ունենալ և չարերը, այլ մեր հիմա ըսածները, սիրոյ և բարեպաշտութեան հրաշքները սիրեցէ՛ք. որոնք այնքան աւելի գերազանց են, որքան գաղտնի են. և որոց համար Աստուծոյ քով այնչափ մեծագոյն է վարձք, որչափ նուագագոյն է մարդոց քով փառք:

(Շարունակելի)



ՄԻԼԼԵԹԻՄԻԶԻՆ ԹԵՃՔԻԼԱԹԸ ՃԵՏԻՏԵՍԻ

Ճէօմասթմըզն հա՛լը հազրընըն ալտըզը շէ՛քը նէվիճատ պաղը միւթալաթա վէսիլէ վիրտուկինտէն, չու պիր գաչ սաթըրլարըմըզն պէթէքրար զագէթայը միւթէրէմէնիզտէ տէրճինի րէճա իտէրիմ:

Ղալաթա Բաթրիգիսանէսինտէ Գանչէլէրլիք վազիյֆէսի իլէ միւ-
քէլլէֆ պուլունան Աքրիկեան Ծ. Վ.ին իշտէն էլ չէքտիրիւմէսի պազը
քէսան թարաֆընտան սուր թէֆէհիւմէ վէ տիւրլիւ պէ տիւրլիւ սուր
մանաւարա եէր վէրիյօր: Կէօյա քի ըրւթպէթլու Կաթողիկոս հազըէթ-
լէրի էսէրի ինթիգամ եա չօլքազլըգ սէմէրէսի օլարագ պու իճրասթտա
պուլունմուշ օլսոււն: Պու ֆարալլյա'թը ղայրը միւնասիպէ բէի'սը ըու-
հանիմիդի ան գասսին գարաւամագ նիյէթիլլէ շիմսիյէ տէկին գուլլա-
նըլմը ֆագաթ բասլանմըլ պիր սիլահ օլսա կէրէք: Զիրա Գանչէլէրլիք
վազիյֆէսինին նէտէ'ն իպարէթ օլտըլը պիթարաֆանէ թահթը թէֆիլիէ
ալընտըլընտա, իշպու մուամէլէնին ատիլ վէ ղարաղտան միւնէղզէն օլ-
տըգտան մա'տա, ղայէթ թապիի վէ միւնասիպ վէ մէճպուրի պիլէ պու-
լընտըլը վարէսթէի իյզահ տըր:

Գանչէլէրտէ իքի սըֆաթ մէվճուտ տըր: Էվվէլա մուամէլաթը բէս-
միյէ'ի տիւնէվիյէտէ Բաթրիգ նամընա իճրա'յը մուամէլէ վէ Բաթրիգ
թարաֆընտան քէնտի էօնտէի էշլիյէթ, պասիրէթ վէ սասագաթընա թէս-
լիմ օլունմըլ օլան միւրի բէսմիյի իսթիմալ իթմէք: պու իսէ քէնտի մէ-
մուրիյէթինին ճիսմանի գըսմընը թէշքիլ իտէր: Մամաֆիհ Գանչէլէր թէս-
միյէ օլընան ղաթ տիկէր պիր վազիյֆէյի տախի հաիզ տիր քի, օ տա սըրֆ
բուհանիյէթի տօլայըսըլլա մագամը բիյասէ'թի բուհանիյէնին իրատէի
քիւլլիյէսինէ միւթէվագըֆ տըր: մէսէլա, նշան օրնէնքի, ազատըգ չէ
հատէթնամէսի վէրմէք, պունա միւմասիլ խուսուսաթ իշին տիկէր Բաթ-
րիգիսանէլէր բուհանի Գանչէլէրլիքլէրիյէ մուխապէրաթա կիրիշմէք,
վէվճիյէթ տաւալարը միւնասիպէթիլլէ պազը մուամէլէ'ի բէսմիյէտէ պու-
լունմագ, փոզլըգապետէր իլէ պու խուսուսլարտա թէաթիի էֆքեար
եօլունտա միւքեաթէպէ իթմէք, վէ իլա ախըրիհի: Տիմէք Գանչէլէր տէ-
նիլէն ղաթ ա'յնի վէմանսա պիր տէրէճէյէ գատար հէմ Բաթրիգէ հէմ
Կաթողիկոսա նիմ վէքեալէթ իթմէքտէ օլըյօր:

Պինաէն ալէյհ, քէնտի հէսթի'ի ղաթը ասընտան մէնութ օլտըլը
ճիհէթլէ, միւճէստտէտէն ճէմաաթ տախլինտէ վիւճուտա կէթիրիւմէջ օ-
լան շու հալը էսէֆիյթիմալ տէվամ իթմէքտէ իքէն նա'սըլ օլուր սա պիր
բուհանի ղաթ Գանչէլէր սըֆաթըլլէ վէ մէմուրիյէթիլլէ տէվամ իտէպիլիւր:
Պու այանէն մանթըգա մուղայիւր տիր: Ասըլ օլմասըգճա, նա'սըլ վէքիլ
օլապիլիւր: Բաթրիգ հօգ, նա'սըլ վէքեալէթի տէվամ իտէր: նա'սըլ մու-
ամէլաթը բէսմիյէտէ պուլունա պիլիւր: Պինապէքիյն, Բաթրիգլիքտէն իս-
գաթ իտիլմիշ օլան ըրւթպ. Թէրգեան էֆ. Գանչէլէրէ տէ «Պատէգիյն սէ-
նին տախլ մէմուրիյէթին խիթամպէղիյր օլմուշ տըր» տէրսէ, պունտա
նէ միւնասէպէթսիզլիք օլապիլիւր:

Հաթթա պիր ազ էվվէլ տէտիք քի պու իսթար բէք թապիի վէ
հաթթա մէճպուրի իտի: Զիրա շուրանը ճա'ի սիւվալ սըր քի, պու հալ-
տէ տէվամ իտիլտիքճէ, պու գանչէլէր էֆ. քիմի'ն ինտինտէ մէսուլ տըր:

Քէմաֆիսսապրդ Բաթրիգ հուզուրնտա՛ մը . ֆագաթ Բաթրիգ եօգ .— միլլէթ մուվաճէհէսինտէ՛ մի . ֆագաթ միլլէթ պիր քէլիմէ՛ի միւպհէմէ տիր .— մէճլիս հուզուրնտա մը . ֆագաթ մէշրու մէճլիս եօգ , զիրա միւլլա տըր , բիյասէթսիգ սիր , բուհանիյէթսիգ սիր : Պէօլլէ հէր մէսուլլիյէթսէն արի վէ սէլահիյէթսէն պէրի պիր մէմուր՛ը բուհանի նա՛սըլ թէսավվուր իտիլէպիլիր :

Իշպու մէմուրիյէ՛թի մէպհուսանըն սըրֆ բուհանի գըսմը իսէ հէր տիւրլիւ իթիրազաթտան մասուռն օլմագ լազըմ տըր , զիրա տօղրուտան տօղրույա կաթողիկոսըգ մագամընա ախտ օլմասըլլա , ճէլպ ու իսթիրտատը վէ իատէսի տէ միւգթագիյաթտան տըր : Պու բուհանի բէսմէրի վէ ալինլէրի էլան աշաղը Բաթրիգիսանէտէ իճրա իթտիրմէք եօլունտա իտտաա իտէնլէր վար իսէ , պունլար անճագ հէրգէկիու սէֆսէթաֆիւրուէ էպլէհան օլմալը տըրլար :

Անճագ մէսէլէնին տիկէր պիր նօգթա՛յը էհէմմի վար տըր քի , նազարլարտան տուր օլմասա կէրէք տիր : Բէի՛սի էքրէ՛մը Քիլիսա օլան Բարա հազրէթլէրի Գայմագամ ինթիխապըլլա եէնի պիր թէշքիլաթա սէպէպիյէթ վէրէն էշիսաըն ափօթօգ ճէզասընա ուղրայաճաղընը էմր վէ էլան իթտի : Պու ճէզատան ազատէ՛ի սէր իթմէք մագսատըլլա իշպու ինթիխապա թէսատտի իթմէմէք պասիրէթ տէյիլ , պիր գաչամագ եօլու , ինճէ պիր միւլահապա իքէն , Գանչէլէր նամըլլա ա՛յը մուամէլաթըն իյֆասը , ա՛յըր թէշքիլաթըն պագասը , ա՛յըր մէմուրիյէթին թէմսիլի նա՛սըլ ճաիգ օլապիլիր : Պու տա՛ ֆիլհագըդա , բէք գապա պիր միւլահապա տըր : Պու հալ Բէիսի էքրէմին թէտպիրինի իշքեալ վէ թահգիր վէ պազիյէ իթմէքտէն իպարէթ տէյիլ մի տիր : Վէ պունա բիյասէթի բուհանիյէ , ֆարզը մուհալ օլարագ , սիւքիւթ պիլէ իթսէ , սըֆաթը բուհանիյէ թաշըյան պիր բահիպ , պու հալին պէօլլէ բէնկսիգ վէ միւլէվվէշ սուրէթտէ տէվամընա նասըլ վասիթա վէ ալաթ օլապիլիր : . . . Նա՛սըլ պիր բահիպ , վազիյիքէշինաս , միւտէպպիր , Ալլահճասընա միւտէպպիր , ֆազլլ վէ բէիսլէրինէ միւթի վէ միւնգատ պիր բահիպ , սըրֆ աշխարհականլար , վէ Բոթրիգի իսգաթ իթտիրէն աշխարհականլար էմրի վէ թէպալիյէթի թահթընտա վէ օնլար իլէ պէրապէր իճրալը մուամէլէ իտէրէք , օ մէմուրիյէթտէ տէվամ իտէպիլիր իտի : Իյճատ օլընան պու վազիյէթին զայրը մէշրուիյէթինտէն սարֆը նազար պիլէ իտիլսէ , հագիգէթի ատիլանէ իթիրաֆ իթմէք լազըմ կէլիր :

Ամմա տէնիլէճէք քի , պու թէտպիր եիւզիւնտէն ասհապը մէսալիհ միւթէզարրուր օլանագ տըր : Էվվէ՛թ . պու բէք աճընաճագ պիր մէսէլէ տիր : Ֆագաթ ճէմաաթըն գըսմը ազամը պունլարըն ճիւրաթընը թագպիհ իթտիկի եէրտէ , նի՛շին սիւքիւթ վէ պիգայտի իլէ իլին պու տէրէճէլէրէ կէլմէսինէ միւսաատէ իտիյօրլար : Մահէզա պու հալին մէսուլլը օլապար տիւլիւնսիւնլէր քի , տուրէնաիշ օլմայարագ վէ հըրս ու հիտ-

տէ՛թ սահագաւորյա վէ պազըլարը տա ամալը միւթէնէ՛վիա գովալայարագ , միլլէթին պաշնա չա հալը բիւրմէլալը կէթիրտիլէր : Վէ էլան , Բարա հազրէթլէրինին աշխեար սէօզ վէ էմր վէ թէտպիրլէրինէ ըազմէն , պու միւշքիլին հալլինի՝ քէնտի իճրաաթը ճահլանէլէրիլէ իմքեանալը գըլմըշ օլտըզլարը ԲՈՒՀԱՆԻ ԻՍԹԻՖԱլարտա արայօրլար : Մէսէլէյի պու կիրիլլէլէրէ չաթարըրգտան սօնրա , ճէմաաթը անգասա ըուհանի պաշսըզ պըրագմոգ կիպի Քիւրսիի շէրիֆէ գարչը սզվլյաթ վէ իթհամաթ նէ՛ գատար մանասըզ պիր սէօզ գալըր : Պասըղը sաղի fեսսիֆ մէսէլի հալէ բէք մուվաֆըզ տըր :

Թէքրար տէնիլէ պիլիը քի պու թէտպիր նէթիյնիսի օլարագ , չիմտի սըրֆ ճիսմանի (աշխարհական) պիր իտարէ գաիմ՝ օլաճագ , Օլապիլիը : Միլլէթին թէշքիլաթընա , էսասընա , մատտիյաթ վէ մանէվլյաթընա , հալէն վէ միւսթագպէլէն հիսապըզ մագարաթը թէվլիտ իտէճէք պու նամէշրու հալ տախի վագը օլապիլիը : Մէսուլիյէթ միւսէպպիպլէրինէ աիտ տիր : Գաշ կարաճաղըզ սէվտասըլա կէօզ չըգարըյօրլար : Շախսիյաթ իտտասը չօգտան վէ չօգ կէրի գալտը : Պաղչէյի իսգա իտէճէք օլան սու , պիր միւտհիշ սէյլի ճօյիպարա թէպաիլ օլտու վէ պաղչէյի խարապ իտիյօր : Խապէրիմիլ վար իսէ , տէվամ ճաիզ տէյիլ . կօզ իսէ , խաճալէթի քիւլլիյէ . . . Հուգուգը միլլէթ պէօյլէ՛ մի միւսաֆաա օլլընը իմիշ . վիճտան վէ Եէգտան հուգուգընտա աճապա նէ՛ ճէվապ հազըրլատըլար : Մահվընը իտտաա վէ ի՛գամ իթտիքլէրի հուգուգ զանն օլընան , հալ պու քի պուշլարըն տաիրէ՛ի մէշրուտա մուհաֆագասը միւքէրէրէն մէհաֆիլը ըէսմիլլէ՛յի ըուհանիյէտէն թէէմին իտիլէն իմթիյազաթըն սւղըրուշ տա պէ՛զլի զայրէթ իթտիքլէրինի չար ազթարը ճիհանա խահիշքեարանէ աքսէնտազ օլան ատէմլէր , հուգուգը սահիհէ՛ վէ միւհիմմէ՛ի միլլէթի պէօյլէ՛ մի մուհաֆագա իտէրլէր իմիշ : Վաղիֆէսինի պիլէնլէրէ գարչը միլլէ՛մնարէրվէրլիք իֆթիրասընը ֆըրլաթտըզլարը եէրաէ , աճապա հագիգի միլլէթէրվէրլիք պէօյլէ՛ մի օլուր իմիշ : Հէյհաթ . . .

Պու ճիւմլէ իլէ , պիզ զանն իտէրիլ , վէ զանն իթմէքլէ իֆթիլտար իտէրիլ քի , Հիւքիւմէ՛թը սէնիլէ . տէնրլէրտէն պէրու սիւրիւպ կէլէն ատալէթի վէ մէզհէպլէրէ գարչը միւսաստէքեարանէ հարէքէթի վէ հիւմայէսի վէ Բաթրիգխանէլէրէ իհան պուլուրմըշ օլտըզը իմթիյազաթ հաւսէպիլլէ , սըրֆ աշխարհական պիր իտարէյի , կանի , հիշ տէյիլսէ սուրէ գահիրէտէ , նէ՛ Եպիսկոպոս նէ՛ ըուհաան ըիյասէթի ըուհանիյէսի թահթընտա պուլուշմայան սըրֆ ճիսմանի պիր իտարէյի քիւլլիյէն նամէշրու պիլիպ , էրմէնի-Գաթօյիք միլլէթի իտարէսի կիպի ըէսմէն թանըմազ վէ անընլա հէրչի պատապատ մուամէլէտէ պուլուշմազ : Զիրա ֆէրամի՛յնը ալիշան մէտըլ՝ւը միւհիֆիհէ Հիւքիւմէթը սէնիլլէ միլլի իտարէլէրի ըիյասէթի ըուհանիյէյէ թէսլիմ իթմիշ վէ էօյլէճէ թանըմըշ տըր : Բօլիթիգա նօզթայի նագարընտան տա պուշու գապուլ իտէմէզ , գիրա էկէր՝միլլէթ :

լէրի սըրֆ ճիսմանի պիր թէշքիլաթ մագամընտա թանըմըշ օլսն, պոռն-տան՝ օ միլլէթլէրէ իսթիլլալիյէթ վէրմիշ մանասը չըգապիլիր քի, պոռնու պիր հիւքիւմէթ զաթիյէն գապուլ իտէմէզ: Չաթէն պիլճիւմլէ Բաթ-րիգխանէլէր պոռ սուրէթտէ, եանի բուհանիյէթլէ թանըմըշ տրրլար: Սօն պուրուլտու տախի պիր ԲԻՍԴՕԲՕՍՈՒՆ Պայմագամ ինթիխապընը ամիր իտի:

Պու էսպապա մէպնի տիր քի, էրմէնի Բաթրիգինի գիյարէթի էս-նասընտա, Բոււմ Բաթրիգի բիւթ. Եուաքիմ էֆնին ըզհար իթտիկի գօրգուլարա բէք տէ իշթիրաք իտէմէյէճէկիւմ: Հէր նասըլ իսէ, գանն իաէրսին քի Բաթրիգ էֆ. պիլիւմ վագաալը միւլէլիմէյի նիմ բէրտէտէն իյմա վէ թէխաթթիւր իթտիրիյօր: Շէօյլէ քի, միւհիմա վէ միւլթէրէք մէսէլէլէրտէ էլպիրլիկիլէ չալըշմագ վէ եէքտիկէրինէ թէալիւնտէ պու-լունմագ ինթիյա՝նը միւպրիմինի տէրմէյան, վէ իմթիյազաթը աթիգանըն մուհաֆազասը ուղրունտա եէքտիլ եէքլիւճուտ պուլունմանըն ֆէվաի-տինի վէ միւգթէլիյաթընը վէ ալրըլըգտան հուսուլա կէլմիշ օլսն մա-զարաթը թաատաւ իթտիքտէն սօնրա, էլհասըլ պիրլիկին իգթիգա իթ-տիկինին անլաշըմըշ օլտըղընը թէպշիր, վէ Թուրքիատա եէնի մէսէլէլէ-րին տախի գուհուրլինի թէէքիտ իթմիշ, վէ հիւքիւմէթին Բաթրիգխանէ-լէր տախիլի իչլէրինէ գարըշմասընը թանըմըշ օլմամագ իչին մէքթէպ բրօկրամլարընը պիլէ թէսլիմ իթմէյէճէկինի իյզան էթմիշ վէ մուախէրէն իլալէ իթմիշ քի, «էլհալէթի հագիհ հիւքիւմէթ իթթիհատ վէ Թէրազ-գը ճէմիյէթինին թահթը թէէսիրինտէ պուլունմագտա տըր. օնուռն իսէ նիյէթի իրիսթիյան ունսուրընը բօլթիգա նօգթալը նագարընտան թիւրք-լէշտիմէքտէն իպարէթ տիր. Պուստան մաստա, մեհնապիի մեվսուգասան խապիւր աշըղըմըզա կօրե, հիւքիւմէք քաթրիգխանէկիւրին իմթիյազարընը իյդա վէ Իրասիի Շահանէ իյե Բաթրիգիւրի քային վէ ազ իթմէֆ իսթիյօր:» Պունա գարըլըգ Բաթրիգ Արշարունի տախի՝ «Պէօյլէ նիյէթլէր պէսլէ-նէպիլիր, ֆագաթ պիլմէլի տիրլէր քի պիլ Շէյխիւլիսլամ տէյիլիզ» ճէ-վապընտա պուլունմըշ: (Stamboul, թ. 104):

Պու միւքիւլէմէ զաղէթալարտա եազըլմըշ իտի. ֆագաթ իֆրաթը տօլալըսըլա պիլ պու իֆատէլէրէ ինանամալըզ:

Հէր նէ իսէ, ճէմաթըմըզըն հալինէ աճըմամագ գապիլ տէյիլ, Հէր տիւրլիւ ֆէթաքեարըլըլա պու հալին իսլահընա պագամագ էլզէմ տիր. պու իսէ, կէչէնքի եազմըշ օլտըղըմ պէնտաւ տուր ու տըրազ իյզան իթ-տիկիւմ կիպի, վազիյֆէմիզի թանըյարագ վէ ազիզ մէզնէպիմիզին տէլա-լէթ էթտիկի չահրահտան չաշմայարագ, իէիսի էքրէմիմիզ օլսն Բաքա հագրէթլէրինին էվամիրինէ ինգըյատ վէ իթաաթլա օլապիլիր. իտտաա վէ թէաննիւտ պիլի խարապ էտէճէք: Գէմա՝լը թէէննի վէ թէէմմիւլ իլէ տիւչիւնմէլիլիզ, վէ ճէնապը Հագգըն հուգուրընտա իլէլ էպէտ մէտուլ գալմամալըլըզ:

ՄՈՒԽԼԻՍ

ԱՄԵՐԻԿԱ

Բ. ԿԱԹՈՂԻԿԵՈՒԹԵԱՆ ԾԱԻԱԼՈՒՄԸ

Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգներուն մէջ վերջին ժամանակներուն Կաթոլիկէութեան ըրած հսկայական յառաջդիմութեան համեմատ ցոյց մըն էր այն: Արդէն Կարդինալը այլեւայլ interviewներով յայտարարած է թէ Սրբազան Քահանայապետը ցնծագին ոգւով կ'ընդունարէ Կաթոլիկէութեան տպագայն Միացեալ Նահանգաց մէջ: Ապա քէն հրաշալի բան է այս յաջողութիւնը: Կարծես Նոր Աշխարհ մրցումի ելած է հին աշխարհի կորսնցներու ճգնած Կաթոլիկէ Ս: Կրօնքի ճշմարիտ գանձն ինքը յափշտակելու, արհամարհելով իր ոսկի հանքերը և ոսկիի դէզերը, որոնք աշխարհիս նախանձաբեկ աչքերը կը չլացնեն...

Արդէն այս կարդինալական գլխարկներու շնորհումը Միացեալ Նահանգաց Կաթոլիկեայք կը նկատեն իւր կարեւորագոյն յաղթանակ մը և պաշտօնական վարձատրութիւն իրենց արագ յառաջդիմութեան: Պիոս Ժ. Քահանայապետին մարդասէր նայուածքները հրճուանօք կը լեցնեն զիրենք, պուակելով Կաթոլիկէ կրօնքին հոն ըրած ամբաւ շահերը: 3 Նոյեմբեր 1908 է ի վեր Միացեալ Նահանգներն այլ ևս չեն նկատուիր իւր առաջնորդութեան երկիր, ընդ հովանեաւ Տարածման Հաւատոյ Ս. Ժողովոյն: Կազմակերպուած է հոն Կարգաւոր Նուիրապետութիւն մը, բաժնուած վիճակներու և թեմերու, որոնց բարեյաջողութիւնը օր աւել կը շնչուի: Զուարթառատ դրիւք կը մասնակցին Ս. Պետրոսի ԳանձաՆակի դրամին, և Կաթոլիկեայ հաստատութիւնք, եկեղեցիներ, դպրոցներ, կղերանոցներ, համալսարանք կ'աճին կը բազմանան Կաթոլիկէ հաւատոյ նոր ի նորոյ շահուած այս երկրաց մէջ:

1906ի մարդահամարը շատ հետաքրքրական ելրակացութիւններ տուաւ այս մասին: Միացեալ Նահանգաց կրօնական բնակչութիւնը, այսինքն անոնք որ կրօնասէր են և կը մասնակցին տուրքի, եւլն, չուրջ 33 միլիոն կը հաշուուին: ասոնց 13 միլիոնը Կաթոլիկեայ է: մինչդեռ 1890ին հազիւ վեց միլիոն էին: Բաց աստի, Ամերիկեան դրօշի ներքե կ'ապրին Փիլիպպին կղեաց մէջ եօթը միլիոն Կաթոլիկեայք, ի Քուպա՝ մէկուկէս միլիոն: Հետեւաբար Միացեալ Նահանգաց մէջ հարկ է Կաթոլիկէութեան մեծ կարեւորութիւն տալ թէ՛ ընկերական թէ՛ քաղաքական տեսակէտով:

Յետահայեաց ակնարկ մը աւելի պիտի փայլեցնէ ներկայ վիճակը: Շուրջ հարիւր տարի է որ Պաթիմորի մէջ հիմնաքարը կը դրուէր Կաթոլիկեայ առաջին Մայր-Եկեղեցւոյ: Ան ատեն Եպիսկոպոսին քով կը շարուէին հաւատացելոց պզտիկ խմբակ մը: Երկրին մէջ քարոզելու համար հազիւ յիսուն քահանայք կային, և ամբողջ հաւատացելոց թիւն

էր հաղիւ հարիւր հազար: Այսօր կարդացէք Վիճակագրութիւններն և սքանչացէ՛ք: Միացեալ Նահանգներու մէջ կան այսօր չորս Կարդինալներ, 12 Արքեպիսկոպոսներ, 91 Եպիսկոպոսներ, 15655 Քահանայք, 12513 եկեղեցիներ, 4443 դպրոցներ, 1136906 աշակերտներ, 268 ուսումնարաններ, 997 հաստատութիւններ, որոնց մէջ պատասպարուած են 1310300 մանուկներ, 43 կարգեր արանց և 109 կանանց կը զբաղին բարեգործական նպատակներով, և կը բովանդակեն 50 հազար միանձնեք: Իսկ եթէ ուզես Կաթողիկէ ստացուածոց հարստութիւնը ի հաշիւ ածել, կը տեսնուի որ միայն եկեղեցեաց գինը կը ներկայացնէ 292 միլիոն տօլարի (չուրջ 60 միլիոն ոսկի) զգլխիչ գումարը:


Միացեալ Նահանգաց մէջ և ոչ մի այլ դաւանութիւն կը տրու մադիէ սոյնօրինակ մեծաքանակ տնտեսական աղբիւրներ, Կաթողիկեայք ըստ ամենայնի յարմարած են կեանքի եռուզեռը ծառայեցնել աշխուսգոյն նպատակներու. չուտով եղան անոնք գործի մարդ, նախաձեռնարկ և ձեռներէց, յանդուգն և իմաստուն միանգամայն. իրենց Դաշնակցութիւնը ո՛չ միայն նպատակ ունի ինկատի առնելու մեծամեծ բարոյական խնդիրներ որ այժմ ընկերութեան ծղիւնիներն են, այլ և կը ստանձնէ Կաթողիկեայ հաւատացելոց նիւթական շահերն ալ մեծապէս զարգացնելու հոգը: Կաթողիկէ Դաշնակցութեան ամէն ընդհանուր գումարմանցը մէջ ընկերային մեծամեծ հարցեր կարգադրուած ատեն, հոգեւորական կարգադրութիւնն ալ մեծաւ փութով կը շօշափեն, ժողովրդականաց յաւիտենական փրկութեան վերաբերեալ պարտքերը կատարել տալու ամէն միջոցները դիւրացնելով. այս է անոնց վեհ գաղափարականը: Բոլոր գաղթականներու հոգ կը տանին ու կ'օգնեն. այսպէսով միացուցին Կաթողիկեայ ոյժերն յԱմերիկա:

Այս տեսակ գործնական հաւատքով, կրօնասիրութեամբ, Առաջնորդաց հնազանդութեամբ, եռանդեամբ ու սիրով է որ աշագին քայլեր առին և յառաջացան:

Հիւսիսային Ամերիկայի Կաթողիկէութեան վրայ ձգած այս հակիրճ ակնարկը կ'արժէր իրաւամբ, մանաւանդ անոնց հոմար որոնք իմաստութեամբ կ'անդրադառնան դարմանալի դէպքերու վրայ՝ շահաւոր մերձեցումներ ընելու համար:

Արտագին ողջոյն և համակրանք ու յարգանք այս մեծահոգի ու կրօնասէր ազգի:

ՏՐՆԻ ԳՕՇԻՆ ԵՒ ՀԱՆՈՐԹՈՅ



Գաղղիոյ պատգամաւորական ժողովոյ Կաթողիկէ կուսակցութեան, այսինքն՝ աշակողմին ամենաին անդամներէն և ժողովոյն ամենաքաջ պերճախօս բեմաասացներէն մին եղող և ճշմարիտ Կաթողիկէ զգացմամբ Ս. Կրօնքի սկզբունքներուն ծառայող և զանոնք գործագրող Պ. Տրնի Գօշէնը քանի մը շաբաթ յառաջ Գաղղիոյ Կաճառին (Academie) անդամ ընդունուեցաւ։ Այս սրամիտ բանախօսը, այս խորաթափանց իմաստասէրը, բացերես պաշտպան է նաեւ կրօնքի իրաւանց, խորհրդարանի բեմէն զարհուրելի յորձակումներ գործեց նա բաժանման օրէնքը գործադրող անիրաւութեանց դէմ։ անտեղիտալի արիութեամբ մաքառեցաւ Կաթողիկէութեան անհաշտ թշնամեաց դէմ։ Բարիզու սրբակեաց Արքեպս. Կանգուցեալ Կարդինալ Րիշար, երբ այն հալածանաց ամօթալի կողոպտումի պահուն իր Արքեպիսկոպոսարանէն քշուեցաւ սրբապիղծ ձեռքերէ, Տրնի Գօշէն, սրտեւսնդն Կաթողիկէն, մարդկային նկատումներու և դիւստնագիտութեան ծեղծեքումներուն առջեւ չոկարացող և իր կրօնական համոզումները յետին միտքերու չծառայեցնող չծախող արիասիրտ Կաթողիկէն՝ Տրնի Գօշէն, վազեց ծերունի Հայրապետին քով գրկաբաց, մխիթարեց զինքը, և իր Փոխանորդ և այժմեան Բարիզու Արքեպս. Կարդ. Ամէթի հետ ի միասին ասպնջակսնեց իր պալատան մէջ երկար ժամանակ։ Իր այս կրօնասէր առաքինութիւնը իր թշնամիներէն իսկ յանգանքի կ'արժանանայ, թշնամիներէ իսկ, որոնք կը պատուեն զինքն ու կը վարձատրեն, բազմեցնելով Անմահից աթոռին վրայ։

Արդ, երբ ընդունուեցաւ Տրնի Գօշէն Կաճառի գմբեթին ներքեւ, ըստ սովորութեան իր արտասանած ճառին պատասխանեց յաւէտ հռչակաւորն Հանութոյ, գեղեցիկ ճառով մը, որուն մէջ ի վեր հանելով հանդերձ Գօշէնի գրական Տաղանդն ու արժանիքը, չկրնար լռել անոր կրօնական զգացմանց վրայ և կը գովարանէ անոր առնական և անվեհեր առաքինութիւնը, նոյնպէս կը փառաբանէ անոր համոզուած կրօնասէրի Փիլիսոփայական սկզբունքները, և կը յիշէ Մեծ մարդուն, Բաստէօնի անունը, որ վերջին դարերու հրաշալիքն և մարդկութեան փառքն եղաւ, և միշտ կրօնասէր ապրեցաւ և ճշմարիտ հաւատացեալ սուրբի մը պէս մեռաւ։ Կը յիշատակէ նաեւ զԹէն (Taine) մեծ Փիլիսոփայ սկեպտիկ, որ իր կենաց վերջին տարիները անկեղծօրէն դիմեց կրօնքի գրկացը մէջ և մեռաւ հաւատացեալ։ Հանութոյ ճառից այս կտորը փափաքեցանք ծանուցանել նաեւ մեր ընթերցողներուն։

«Ըսի որ արդէն Փիլիսոփայ ալ էիք այո՛, ճիշդ այն ժամանակն

էր որ յօրինեցիք այն զոյգ երկասիրութիւններն որոնք թէ՛ մեր և թէ՛ ընդհանրութեան առջեւ ձեր գրական տիտղոսներն են: 1885ի մէջ իրատարակեցիք «Շրջափոխութիւն և կեանք» (l'Evolution et la Vie) . աւելի ուշ ի 1895 . «Արտաքին աշխարհը» (le Monde Extérieur) . «Առաջին գործոյն մէջ խստիւ կը քննադատէք Գոնիմի Իրականագալտութիւնը (Positivisme) . Հէքէլի և Հէրպէրթ Սթենսէրի Հիւլէագալտութիւնը (Monisme) . Անաշառ դատախազ կը հանդիսանաք և կը դատապարտէք միակ բարեշրջութիւնի անիրաւ գաղափարը . որ հանքային աշխարհը անխտիր կ'ենթարկէ միատեսակ և միօրինակ զարգացումի: Հաւատարիմ ձեր հարցը կրօնքին . կը գոչէիք . «Ուրիշ լոյսեր կան» . Խօսք մը այնչափ աւելի զօրաւոր . զի կը յենու գիտական յօրինումածութեան և դրութեան մը վրայ . որ Բասթօրի գիւտերուն մերձեցմամբ . կը գտնէր ամենէն ազդու և ստիպող փաստը ձեր բնազանցական (mé-laphysique) եզրակացութեան ի նպաստ:

«Այս եզրակացութիւնը անհամաձայն չէր . գիտէիք դուք զայս . վարպետին մտածութեան հետ: Մէկ անգամէ աւելի հանդիպեցաւ ինծի . — և իմ կենացս մեծ յիշատակներէն մին է այս . — ներկայ գտնուիլ այն խօսակցութիւններուն . որոնց երկու խօսակիցներն էին միայն Բասթօր և Թէն: Երբեմն խօսակցութիւնը կը դառնար այս ծանր նիւթերու վրայ: Թէն . գալարուելով ինք իր վրայ . տարակոյսի մէջ ալ հնարք գիւտ . հարցումներով և առարկութիւններով զինուած . վեհերոտ ճշդութեամբ մը կը կռէր իր խօսքերը . և ինչ որ ալ ըլլար իր մտածութիւնը . երեւան չէր գար: Հարցումներ կ'ուղղէր: Իր բնազանցական անվստահութիւնը սովորատեան մէթոտը կը գործածէր . նաեւ Բասթօրի հետ: Իսկ սա . իր միամիտ հաւատքին փառաւոր անկեղծութեամբ . կը պաշտօնանէր ինքը զինքը ինչպէս կրնար . և — կ'ըսեմ ինչ որ տեսայ . — տհաւոր պատճառաբանը երկիւղ կ'ազդէր իրեն . բայց . վերջապէս . մինչեւ վերջին պատնէշը մղուելով . քաջարար կը դիմադրէր . և կարուկ . անդիմադրելի . գրեթէ հարկադրիչ բառերով . կը յայտարարէր բարձրաձայն . թէ սիրար աւելի ընդարձակ է քան միտքը . թէ հաւատքը անհրաժեշտ է գիտութեան համար . թէ ստեղծողը պէտք է ստեղծուածին: Իր հանճարը . խոնարհ և գուռոզ միանգամայն . աներկիւղ կը ձգէր կ'անցնէր այն սահմանը որ դրական հետազօտութիւնը կ'արգելու անսահմանին սեփոց առջեւ:

«Բասթօրի դասերն ձեր գրքին հիմը կը կազմեն . և կ'ուղեմ աւելցնել որ անոնք այն ժամանակ սոյն գրքին ամենամեծ նորութիւններն էին: Այս բարձր մտածմունքներն զձեզ մատենագիր մ'ըրին . և այն ատենէն զձեզ մատչանիշ կ'ընէին այն տեղոյն զոր պիտի գրաւէիք մեր մէջ:»



ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՀՈՂՎՍ

Միջինարական է տեսնել որ սա վերջին ժամանակներու մէջ, երբ Ս. Քաջանայապետին հայրական սիրտը շարունակ ի խոր կը խոցուի՝ ընդդէմ ճշմարտութեան անողոք մղուած պայքարին և օրէ օր աւելցող շարունակեան սուր հանգամանքով, ճշմարիտ Կաթողիկէ ժողովուրդը սակայն ամէն ազնիւ կերպերը կը խորհի Եկեղեցւոյ սրբազան Գլխոյն կարելի եղած սփոփանքը մատուցանելու համար։ Ասոնցմէ մին է Ուխտաւորութիւնը, Յիքանի կ'երթայ կը յաճախէ և բազմաթիւ հաւատացեալք աշխարհիս ամէն կողմէն, նոյնիսկ հեռաւոր վայրերէն, կը դիմեն ի Հռոմ յունկնդրութիւն Ս. Հօր։ Ապրիլ Ծին Վատիկանու մէջ ընդունեց Ս. Քաջանայապետն Պիոս Ժ. Հռոմագարացի Ուխտաւորները, որոնք հինգ հարիւրէ աւելի էին, զորոնք ներկայացուց Աւստրիոյ—Հունգարիոյ դեսպանատան խորհրդակտնը, և ծառեր խօսուեցան. Սրբազանը հայրական սիրով կ'օրհներ զիրենք։ Ապրիլ Ծին ներկայացան Բարիգու Էֆօլ-Նօրմալի սանուհեաց խումբը. ապա Լեհացի համալսարանական ուսանողները. — յետոյ Նոթրօլի երիտասարդաց խմբակը, գահերեցութեամբ Կոմիտարաչոյցին — Ապրիլ 10ին կը ներկայանային Բարիգու Կաթողիկէ Համալսարանին աշակերտաց Ուխտաւորութիւնը, գեղեցիկ ընծաներով և ծառերով և յաւէտ խոստովներով բարեպաշտութեան և հնազանդութեան։ Անոգուտ չըլլայ յիշել ծառախօս երիտասարդին սախօսքերը, և Կաթողիկէ Համալսարանին մէջ մեր առած ուսումն, ո՛վ Սրբազան Հայր, նոյնիսկ ամենէն արտաքին սեպուած գիտութիւններու մէջ, կը ներշնչուի անկեղծօրէն Կաթողիկէայ ոգիէն, որ կը թափանցէ անոր մէջ, կը կենդանացնէ զայն, և քննէ ի բաց կը փտարէ ինքնասաց չէզբքութիւնը միւս Համալսարանականներու։ Այսպէսով այնպիսի մտաւորական կազմութիւն մը կ'առնուէր, որուն քրիստոնէայ ազդեցութիւնը ապագային մէջ պիտի պահպանէ զմեզ մոլորութեան վտանգներէն։ Եռանդուն Կաթողիկէ և քաջուսումն վարժապետներու հետ շփու մով մեր ընտանեաց մեզի աւանդած հաւատքն ու Եկեղեցիի հաւատարմութիւնը աւելի իր լուսաւորութիւն և կը զօրանան իրենց աշխատասիրութեամբ։ Օրինաւոր իշխանութեան հնազանդութեան ոգւով, իրենց անսահման անձնունւիրութեամբ, մեր ուսուցիչներն ամենապերճ քարոզութիւն ըրած կ'ըլլին մեզ։ Անոնց օրինակին ետեւէն կը պատրաստուինք ընտիր ու պարտաճանաչ քրիստոնէաներ ըլլալու, ընկերային այնպիսի ծախութիւններ, որոնք պատիւ բերեն Կաթողիկէութեան իրենց անհատական և հրապարակային կեանքով։

* Մեր 36 թիւին մէջ, էջ 126 գրած էինք որ Գաղղիացի Աստմսինիստ կրօնաւորաց կարգին հոգաւոր արեւելադէտ և առաքինազարդ Հ. Բըթի Ս. Քաջանայապետէն անուանուած է Արքեպիսկոպոս Աթենքի և Քաջանայապետական Նուիրակ Յունաստանի։ Արդ Հ. Բըթիի Եպիսկոպոսական ձեռնադրութեան արարողութիւնը կատարուեցաւ ի Հռոմ, ի 26 Ապրիլի, Ս. Օգոստինոսի Եկեղեցւոյն մէջ։ Զեռնագրիին էր Վսեմ. Կարդինալ Գալբրէր, Եպիսկոպոս Մօնթէլիէի ի Գաղղիա, որ Գեր. Բըթիի շատ մտերիմ բարեկամ ըլլալով, հոգաւոր իր դողդոջ ուսերու վրայ ծանրացող ութսուն տարիներու, յատկապէս Եկաւ ի Հռոմ այլ ձեռնադրութիւնը կատարելու համար։ Եկեղեցին լեցուած էր ընտրեալ հանգիստտներով, յորս էին Գաղղիոյ բազմաթիւ Եպիսկոպոսներ, այլեւայլ կրօնաւորական կարգերու ներկայացուցիչներ, Մօնա. Բօլլէրի, Հէրցօկ, Քայդէր ևն.։ Իսկ մասնաւոր հրաւերով, իբր ներկայացուցիչ Հայոց զորս այնքան կը սիրէ մեծարոյ նորապատկը, ներկայ գտնուեցաւ Արհի. Գոյունեան Պ. Արքեպս.։

Յետոյ Կարդ. Գալբրէր սեղան մը տուած էր իր ձեռնադրած բարեկամին Արհի. Բըթի բաժակաճառ մը արտասանելով, Արհի. Գոյունեանի յայտնեց իւր շնորհակալքը, և իր սրտեռանդն ողջոյնները աղաչեց հաղորդել Ամենապ. Հոգեւոր Տէրուն և ամբողջ Հայ Կաթողիկէ Նուիրապետութեան։

~~~~~

# ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆ

Կիրակի օր Ամենապ. և Գերերջ. Հոգեւոր Տէր Իւր Փօխանորդ Արհի. Ռաբրոստան Աբգ.ին հետ այցելեց Անարատ Բղութեան Կարգի Կուսանաց Մայր վանքը, ուր պարտ ու պատշաճ յարգանքով ընդունուեցաւ: Նախ Առ. ընդհ. Մայր Մեծաւորէն և իր խորհրդական և Առաջիկաներէն առաջնորդուեցաւ վանքին մասուռը, ուր մտնելուն պէս, սանուհիք սկսան երգել «ԳԲԵԳ Աստուած» գովաբանական երգը. և Ամենապ.Տէրը կարճ աղօթքէ մը վերջը ազգեցիկ յորդորական մը խօսեցաւ Կուսանաց և Գահանայապետական Օրհնութիւն առաւ ամէն ներկաներուն: Ապա մեծ սրահն ելելով, Մայրապետներն, նորնծայք և ուղարկուող իր մերձեցան Աջահամբոյրի, և բարձր դասարանի մի սանուհի ուղերձ մը տրտառնեց շնորհակալութեան առ Նորին Վեհափառութիւն. որուն հակերձ խրատականով մը պատասխանեց նա: Նոյնպէս այցելեց նաեւ Նոյն Մայրապետներուն այնքան տարիներէ ի վեր տննաւիրարար խնամարկած Որբանոցը. ուր նոյնպէս ճառեր խօսուեցան ու գեղեցիկ երգեր երգուեցան որբուհիներու կողմանէ, և Հոգեւոր Տէր միթարական խօսքերով որտաղեցեց և ուրախացուց զոր աղջիկները և շնորհակալութիւն յայտնեց տեսչուհի և ուսուցիչ Կուսանաց և քաջարեց զանոնք: Եւ ապա Որբանոցին պիտոյից համար դրամական նուէր մըն ալ շնորհելով, մինչեւ դուռը մեծարանքներով ու զարկուելով վերադարձաւ ի Կաթողիկոսարան: Հետեւեալ օրը Առ. Մեծաւոր Մայրը յատկապէս Կաթողիկոսարան գտնով, Միարանու ծեան կողմանէ շնորհակալեց յայտնեց Ամենապ. Կաթողիկոսին բարեացակամ այցելութեանը համար:

~~~~~

ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԵՐ

Էջմիածնական Խառն Ժողովի անդամները գաղափար յղացած են միւս Պատրիարքարաններու ևս հրաւեր ուղղելով Նոր Միջազգային Յանձնաժողով մը կազմելու, որպէսզի կտրինան վերջերս այնքան սուր հանգամանք ստացած կարգ մը խնդիրներու լուծման ուղիատի կտրաւարութեան դէմ բողոքելով: Այդ կենտական խնդիրներն են՝ ի մէջ այլոց, զինուորագրական ու դպրոցական հարցերը, մահիւլի անուեով եկեղեց. կալուածներու հետդհեւտ գրուումները ևն. ևն. բայց կը յիշուի արդեօք թէ այդ խնդիրները դեռ չարժանաւոր, Պատրիարքարանները, կամ պաշտօնական մարմինները ձեռքի ստակէ հարուածել ջանացին Պատրիարքարաններու հիմնաքարը եղող այնպիսի թումբեր՝ որոնք անգամ մը խտրելէ յետոյ, մտացած խնդիրները ինքնին պիտի անպաշտպան մնային...

* Արշարունի Պատրիարք Էվգաֆի նախարարին այցելելով, աղգային կալուածներու խնդիրները արգարութեամբ կատարուելու մասին խնդիրքները ըրած է: Նախարարը խոստացեր է ուսումնասիրել զայն և ինչ ինչ խնդիրներու համար ալ նշանակած է թէ անհրաժեշտ է դրամական զիջողութիւններ ընել՝ պաշտօնապէս արձանագրութիւնները կատարուելու համար:

* Օտմ. Երեսփոխանական Ժողովի հայ մէջուաներու թիւը, ինչպէս կը յիշուի, գէթ 18 հոգի պիտի ըլլար, որ մասին՝ Իթիֆհատը խոստումներ ըրած էր Հայ ազգին և ի մասնաւորի Դաշնակցութեան, եթէ իրեն գործակցէին:

Այժմ, ակներեւ տեսնուեցաւ՝ թէ ինչ ճարտարութիւններու «շղիւնք ըլլով», Հայք Տ հոգի միայն կուենան: Ռամկավար և Հնչակեան, ինչպէս նաեւ Եղոր միւս ազգային թերթերը, քրոնիկ սկիզբէն դէմ կանգնած էին նման համաձայնութեաց մը, այժմ այդ ձախողութեան միակ պատասխանատու կը ըսնին Պատրիարքը և Դաշնակցութիւնը, մին՝ արտաքուստ նախանձախնդիր ու գիտակից իր պաշտօնին ներկայացնելով՝ հանդերձ ինքզինք, իրապէս երկնիքի ընթացք մը ըսնած ըլլալով՝ ամբաստանութեամբ. միւսը՝ իբր թէ իր ծանծաղած ընթացքով և իր շահը ստակ փնտրելով՝ ամէն իժիր ազգային նախական իրաւանց դաւաճանած ըլլալուն համար:

Իրողութեանը հոն է՝ որ, այժմ Դաշնակցութիւնը իր խոր քառնէն պիտի բողոք—

ծանուցողները կը տեղացի իթթիհասի գլխուն. իսկ Պատրիարքը, շրջաբերականով տեսնելու և իթթիհասի կարող անգամներէն նէսիմ պէյի հետ ունեցած մէկ տեսակցութեան միջոցին կ'ապառնայ իր իշխանութեան վրայ յեցած հրաւիրել նորընտիր երեսփոխանները որ միահամուռ հրապարհին, եթէ իթթիհասը չիցնէ հայ մէկուսներուն թիւը, Բայց, ոսի միթէ չի յիշեցներ ֆրանսական առածը *Chercher midi à quatorze heures*!

*. Դալմաթիոյ Խորհրդարանը Ապրիլ 29ի նիստի պահուն կռուի դաշտի տփտարանն առած էր, նոյն իսկ քիչ մնաց որ արիւնհեղութիւն պատահէր Վաւանի (Դաշնեցի) և Տէր Մոսէսեանի միջեւ փոխանակուած խօսքերուն համար Վաւանն ատրճանակ ի ձեռին կ'ապառնար, ժողովականք հաղիւ կրցան զոպել զանի Կեդրոնականի Դաշնակցական աս- ներէն ալ հոն պատարաստ կ'ապառէին իրենց հերոսութիւնը ցոյց տալու. բարեբախտաբար բռնուցքի հարուածէ մը զան ուրիշ քաջագործութիւն չատենագրուեցաւ նոյն օրուայ ժողովին ժառանգին մէջ:

*. Կարնոյ Սանատարեան վարժարանի մէջ տեղի ունեցած գայթակղելի արարքները, ու վարժարանին կազմալուծեալ վիճակը դարձեալ ինքրոյ նիւթ եղած էր լրագիրներու մէջ: Անոնց իբր միակ պատճառ կը բռնուի Դաշնակցութիւնը, որու անգամներէն մին հե- ոացուցուած էր տեղութեան, մինչ Դաշնակցութեան գիտաւորութիւնն է եղեր իր ձեռքն առնուլ ամբողջ վարժարանի ներքին և արտաքին վարչութիւնները: Պոյոյ մէջ գտնուող Սանատարանի վերին ինժամակալութիւնը սակայն, որ լուրջ պաշտօնավարութեամբ դրա- մագրուին ալ ցարդ գրեթէ կրկնապատկած է, անխախտ մնաց իր որդման մէջ, և վերջա- պէս հեռացուց այն անձինքը որոնք քարոզը կուսակցական միջավայր մը դարձուցած էին, ուր կը գործուէին ամէն տեսակ տնկարգութիւն և անբարոյութիւն, ինչպէս կ'ըսեն և ցա- կը յայտնեն հայ թերթեր:

Ն Ե Ր Ք Ի Ն Գ Ո Ր Մ Ե Ր

Մեծ տէրութեանց դիմումին ու մանաւանդ Ռուսիոյ տուած երկրորդ ծանուցողքին վրայ, Նախարարաց Խորհուրդը որոշած էր՝ վերջապէս մինչեւ երկու օր Տարաւելլէ քանոյ չէզոք տէրութեանց վաճառականական նաւերուն: Բայց կ'ըսուի թէ Իտալիոյ ըրած նոր յարձակումները Եգէականի մէջ, ստիպեցին կառավարութիւնը տակաւին քիչ մին ալ սպա- տելու:

*. Տարաւելլի մէջ թրքական Սէմէնէր նաւաձիգը ընդժողկայ ականի մը զար- նուելով օդը ելաւ. 4 սպայ ու 4 նաւազ, որոնց երկուքը հայ են, մեռան. նմանապէս խեղդուեցան մէջը եղող 12 զինուորները:

*. Ամսոյ 20ին Իզմիրի ժողովարդին մէջ ընկղմեցաւ Հաճի Տափուս ընկերութեան թէֆասա շոգենուր՝ ականի մը բախելով. բազմաթիւ մեռեալներ կա. ի սկզբան այնպէս լուր տարածուեցաւ՝ իբր թէ ամրոցներէն արձակուած ռուսքի մը հարուածէն արկածը պատահած ըլլայ. բայց ներքին Գործոց նախարարութեան եկած պաշտօնական յուրին համաձայն, յիշիալ նաւը չանսալով ամրոցներու թնթանութներու զեկուցումին՝ ուղած է շարունակել իր ճամբան:

*. Դահաժառանգ Եուսուֆ Իզզէտտին էֆ. ի աւաղին կնոջ յաջորդկաւորութիւնը մեծ չքով Պէշքեթաշէ Եէնի Դարու փոխադրուելով շոգենուակով մը, Ագսերայի Վալիտէ մզկիթին մէջ ամփոփուեցաւ:

*. Ապրիլի 14ին Սալթանին գահակալութեան տարեդարձի առթիւ պաշտօնական ընդունելութիւնները կատարուեցան Դօմա Պաղչէի պալատին մէջ: Այդ առթիւ զօրա- հանդէս մը կատարուեցաւ կէս օրէ վերջ Ազատութեան բլուրին վրայ, որուն մասնակցե- ցան քառասուն հազար զինուորներ: Միեւնոյն պահուն, Ֆրանսայէ գնուած օսմ. բանակին առաջին սաւառակը, որ Պիլիքի Օրսու կոչուած է, Այ-Սթէֆանոյէ երկրով եկաւ Ազա-

տութեան բլուրին վրայ, ու շուրջ 1000 մեզր բարձրութենէ մը քանի մը շրջաններ կատարելով, մեկնեցաւ դարձեալ գեղի Այ-Սթէֆանո:

Նոյն օրը ժամը 9ին, կատարուեցաւ նաեւ պաշտօնական բացումը Ղալաթիոյ ճորակառոյց հսկայ կամուրջին, և այդ առթիւ կամուրջին երկու կողմերուն վրայ այ ոչ խարներ ժողովուեցան:

* Կրետացի 18 երեսփոխաններ «Բելօքօնիս» շոգենաւով Յունաստան կ'երթային, անգլիական ժարտանաւ մը ձերբակալեց նաւը և այդ անձինքը բանտարկուեցան Նոյն ժարտանաւուն մէջ. և տակաւին ազատ չեն թողուած: Բայց լռնտոնէ կը տեղեկացուի թէ Հելլէն կառավարութիւնը դիմումներ կ'ընէ մեծ տէրութեանց մօտ, անոնց արձակուելուն համար:

* Յոյն Պատրիարքարանի կրկին ժողովները խորհրդակցութիւն մ'ըրին Նահանգաւորին օրէնքին վրայ, որ Սուլթանական իրատէով մը աւժամագէս գործադրութեան ոկոսած է դրուել, և ըստ որում կրօնական պիտերը այլեւս չպիտի կարենան մասնակցիլ մէծխար խտրեւերու նիստերուն:

* Ապրիլ 23ին հասած լուր մը կը հաստատէ թէ Իտալական նաւատորմը պաշարած է Ոգէականի բոլոր կղզիները, և ուժակոծելով Հոռոսը զանի գրաւած է ու ցածաք զօրք հանած:

* Դաժնակոսի մէջ տհաւոր հրդեհ մը տճիւն դարձուցած է հնադարեան կամուրակապ գեղարուեստ շէկաններն ամբողջութեամբ, որոնց հետ հրոյ ճարակ եղած են շատ տուններ, մէսնիքներ, խաներ, ևն. ընդամենը 600է աւելի: Վնասը կը հաշուուի շուրջ կէս միլիոն ոսկի:

~~~~~

#### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ֆէսի մէջ եղած ծանր խռովութեան ձերբակալեալ ըմբոստները հաստատած են թէ ժողովուրդին մէկ մասը համախոհ էր իրենց: Հրէից թաղը բոլորովին աւերակ դարձած է:

\* Գերման դեսպանը Պոլսէ ստիպողաբար Պերլին կանչուած է: Կը կարծուի թէ Գերման կառավարութիւնը կ'ազգէ իր դեսպանին հաղորդել Իտալիւթուրք հաշտութեան մասին իր տեսակէտները:

\* Պուլկարիոյ Օրթօօքս Սինոդը կը մերժէ Ֆերտինանտ թագաւորին թագադրութիւնը կատարել՝ անոր զաթողիկէ կրօնքին պատկանելուն համար: Հաւանականաբար թագադրութիւնը պարզապէս քաղաքական հանդէսի մը երեւոյթը պիտի առնու:

#### ԲՈՎԱՆՊԱԿՈՒԹԻՒՆ

|                                           |     |
|-------------------------------------------|-----|
| Քրիստոսի Համբարձումը . . . . .            | 209 |
| Միլլէթիմիզիքն քեփիլաքը ճեփեփէսի . . . . . | 212 |
| Ամերիկա . . . . .                         | 217 |
| Տընի Գօօքն եւ Հսնոքոյ . . . . .           | 200 |
| Տեղեկագրականք . . . . .                   | 206 |

ԱՐՏՕՆԱՏԷՐ  
ՅՈՎՀ. Մ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ



ՏԵՕՐԷ-ԽՄԲԱԳՐԱԴԵՏ  
ԳԵՈՐԳ Մ. ՎԱՐԴ. ԹԵՐԶԻՊԱՆԵԱՆ

Տպագր. Փսմաթեան Գործակցական Ընկ. Էպօստոլոս ճառքէսի Նօ. 27



«ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ» . Հայ Կաթողիկէ Պատրիարքարանի պատշտական Շաբաթաբերքը, փոխադրուած է ի Կ. Պոլիս, եւ կը սկսի հրատարակուիլ առ այժմ 16 մեծագիր էջերէ բաղկացած եւ ճոխ բովանդակութեամբ. ունենալով նաեւ տեղեկութեանց բաժին մը, որ կը պարունակէ կարեւոր եւ ստոյգ ամէն յուրերն՝ համառօտուած . որով եւ մեծ դիւրութիւն կ'ընծայէ ընթերցողներէն անոնց մանաւանդ որոնք առհասարակ ժամանակ չունին օրաբերք կարդալու :

ԸՆԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՃԱՐԱՆԵՐ

Թուրքիոյ համար

Տարեկան . . . . . Դնեկ . արծ. 40

Վեցամսեայ . . . . . » » 20

Արսասահման

Տարեկան . . . . . Ֆրանկ 10

Վեցամսեայ . . . . . » 5

Բաժանորդագրութիւնք կանխիկ կը վճարուին Մանսա-Քոստով եւ կամ մէյ մէկ դրանոց նամակագրութեամբ :

Մէկ թիւ 1 Դահեկան



Նամակ, յօդուած, եւն. կը ղրկուին խմբագրութեան հասցէին.

ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

Պատրիարքարան Կաթողիկէ Հայոց /

Բերա

Կ. Պոլիս

Katoghighe Arzakank

Patriarcat Catholique

Péra

Constantinople

ԾԱՆՈԹ.— 1.— Արձագանկ կը հրատարակուի շաբաթ օրերը:

2.— Խմբագրութիւնն պարտաւորեալ չէ անպատճառ կամ ճոյնութեամբ հրատարակել իրեն ղրկուած ո եւ է յօդուած:

3.— Չեղագիրներ եւ չեն դարձուիր:

4.— Յօդուածներու ձեռագիրները պէտք է գրուած ըլլան թուղթին մէկ կողմը միայն:

5.— Խառնուցմանց համար մատուոր պայմանագրութիւնք կրկնատուին: